ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

28.05.2020
345-47

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար
պարոն Էդուարդ Աղաջանյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աղաջանյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Հայկական բնապահպանական ճակատ» կամավորական նախաձեռնության անդամ Լևոն Գալստյանը՝ տեղեկացնելով, որ հարցմամբ դիմել էր ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ խնդրելով տրամադրել բուլղարական «Գեոտեխմին» ընկերության կողմից Թեղուտի պոչամբարի վերաբերյալ կատարած ուսումնասիրության արդյունքները ներկայացնող զեկույցը: Հարցմանն ի պատասխան Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը 2020 թ.-ի մայիսի 25-ին ուղարկել է պատասխան-գրություն՝ որտեղ նշվում է, որ զեկույցը հնարավոր չէ տրամադրել, քանի որ հետազոտական զեկույցի պատվիրատուն «Թեղուտ Մայնինգ» ընկերությունն է, և միայն նշված ընկերությունն իրավասություն ունի հրապարակելու կամ որևէ մեկին տրամադրել զեկույցի նախագծային տարբերակը և կոչ է արվում զեկույցի նախագծային տարբերակը ստանալու համար դիմել հետազոտության պատվիրատու «Թեղուտ Մայնինգ» ընկերություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է տեղեկություն հասկացությունն ու այն տնօրինողների պարտականությունների շրջանակը: Ըստ այդմ՝ զեկույցի մասին տեղկությունները ՀՀ կառավարությունը կա՛մ չէր կարող ունենալ, կամ կարող էր ստանալ և/կամ մշակել միայն օրենքով սահմանված կարգով: Իսկ եթե տեղեկությունը ստացվել է և/կամ մշակվել է օրենգով սահմանված կարգով, ուստի դրա հրապարակումը Կառավարության կողմից կարգավորվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով:

Միաժամանակ պետք է նշել, այս դեպքում անգամ եթե օրենքով սահմանված կարգով ստացված/մշակված տեղեկությունը չհրապարակելու համար առկա է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք, միևնույն է պահանջված տեղեկությունը ենթակա է հրապարակման, քանի որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը ամրագրում է՝ «Տեղեկության տրամադրումը **չի կարող մերժվել**, եթե դա ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև

**բնության և շրջակա միջավայրի պաշտպանության**, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

Ուստի համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել «Գեոտեխմին» ընկերության կողմից Թեղուտի պոչամբարի վերաբերյալ «Գեոտեխմին» ընկերության կողմից Թեղուտի պոչամբարի վերաբերյալ կատարած ուսումնասիրության արդյունքները ներկայացնող զեկույցի նախագծային տարբերակը և/կամ զեկույցը, եթե այն արդեն վերջնական բովանդակությամբ առկա է:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան